



Ա Ր Մ Ա Բ Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻԻ Գ. ՕԳՈՍՏՈՍ

1869

Բ. ՏԱՐԻ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ եւ հաւարմունք աստուածաշունչ բանից թարգման յարինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արազ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ մեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն

(Շարունակութիւն)

ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ: Եւ արդ բացայայտեցուք զզլեաւորարար եղեալս: 'Նախ իբրև զհիմն ինչ պիտանի է թագաւորի' բարեպաշտութիւն, որ առաւել թագապաճոյճ կազմէ զնա քան զականս պատուականս եւ շքեղազոյնս, քան զտէրութիւնս բազում աշխարհաց: Ճշմարտագոյն հաւատով սի-

րել զՆստուած յամենայն սրտէ եւ 'ի զարութենէ. 'ի նորին սուգնականութիւն վրստահանալ, եւ յամենապաւր անուն նորս խրախոյս բառնալ. 'ի բազուկ նորս յուսալ, եւ նովաւ զամենայն ինչ վճարել պանծալ որպէս աւրինակն եւ նախնին բարեպաշտ թագաւորաց Վաւիթ. զի զոր ինչ առ-

597

հաւատ ոչեւարայն գործէր, զնոյն և 'ի թագաւորութեանն, զի ցուցցի առանց ծածկութեան հաւատ նորա: Ըստ որում 'ի մանկութեանն յուսովն և հաւատովն որ առ Աստուած, յաղթէր զազանաց և սկայից, այսպէս և 'ի թագաւորութեան՝ ամենայն թշնամեաց իւրոց: Ար ոչ երբէք յուսացեալ եղև յայլ որ, բաց միայն 'ի Տէր Աստուած: Աչ 'ի կուռս, որպէս և պարծէրն համարձակ. «եթէ մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ մերոյ, կամ ձգեալ իցէ զձեռս մեր յԱստուածս յաւտարս»: Աստուած խընդբէ զայս որ քննէ զ. սրտից մերոց: Աչ ապաւինեցաք յերիվարս, որպէս ասաց, "ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ոչ սուր իմ կեցուցանէ զիս. այլ աջ քո և բազուկ քո և լոյս կեանաց քոց": Աւ թէ "սուտ է ձիոյ փրկութիւն 'ի բազում զաւրութեան իւրում, ոչ սպրկեցուցանել զհեծեալն": այլ "աչք Տեառն 'ի վերայ երկեղածաց իւրոց փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա": Աւ թէ "ոչ ընդ զաւրութիւնս ձիոյ կամեցաւ տէր և ոչ ընդ առն սկայի հաճեցաւ. այլ հաճեցաւ յերկեղածս իւր և յայնոսիկ որ յուսան յորումութիւն նորա": Այլ և ոչ 'ի մեծութիւն թագաւորութեան իւրոց սպաստան եղև, որ ասէրն. "պանդուխտ եմ ես և անցաւոր". և թէ "ես աղքատ և անանկ եմ". և թէ "Տէր հան 'ի բանտէ զանձն իմ":

Այլ մեծաւ յուսով և հաւատով յԱստուած խարսխեալ, նովաւ զամենայն ինչ առնէր: Աւ զեղանակ սիրոյ նորա առ Աստուած, 'ի նորին բանից անտի ծանիցես այլ և 'ի գործոց: Ըստ որում յայտնէր զառ Աստուած անձուկ սիրոյն. "որպէս փափաքի եղ ջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքի անձն իմ առ քեզ Աստուած: Աւ ծա-

րաւի է անձն իմ՝ առ քեզ, երբ եկից երկեցոյց երեսաց քոց". և յայլս յորովս նման սոցին: Պատուէր յոյժ և նախ քան զամենայն ինչ զառնն Աստուծոյ և զանղի յարկի փառաց նորա: Այսանորոյ և տակ որ առ 'Աթան. "ես բնակիմ 'ի տան եղևնափայտեաց, և հապանակն Աստուծոյ արտաքոյ կայ, մինչև 'ի Տեառնէ արպելաւ ոչ շինել: Սակայն խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ Յակորաց: 'Աս և Սողոմոն շինեաց նմա տուն զհռչակաւորն և զերկեղին սակայն 'Աւախթ 'ի տան հանգոյց զնա. և կարգեաց երգս և պաշտաւնեացս: Աւ յորժամ հալածեալն լինէր յԱբխաղոմաց որդւոյ իւրոյ, ոչ թողացոյց քահանայիցն զՏապանակն Աստուծոյ ընդ նմա շրջեցուցանել այլ ասաց. "գարձուցէք զգա 'ի անդիւր". թէ հաճեցի ընդ իս Տէր, ցուցցէ միւսանգամ ինձ զգա և զփայելութիւն գորա": Այլ և Սողոմոն իբրև ժառանգութիւն ինչ զբարեպաշտութիւն փոխանորդեալ 'ի հաւրէն, 'ի սկիզբն թագաւորութեան իւրոյ ոչ այլ ինչ բղձացաւ առնուլ 'ի Տեառնէ, քան իմաստութեան շնորհ յարգարարատութիւն և շնեաց զառնն Աստուծոյ, թէպէտ և յետոյ սղալեցաւ: Օգնչ և զԱղեկիս հրաշափառագոյն եցոյց 'ի թագաւորութեան իւրում, քան թէ որ 'ի բոլոր սրտէ յուսացաւ 'ի Տէր. երարձ զբարձունսն. զբաղմս՝ ժամանակեաց արձան չարութեան՝ զառն պղնձի, զոր արարն Մովսէս, խորտակեաց, զոր մինչև ցայն ժամ պաշտէին որդիքն Կարայէլի, և անուանեալ էին զանուն նորա 'Աիէսթան: Այսանորոյ սյսպիսի հաւատոյ՝ յուսոյ և սիրոյ որ առ Աստուած, յաղթանակ ընկալաւ զտէրութիւն 'ի վերայ թշնամեաց իւրոց. և աղաւթիւք հերքեաց զգաւրն Աստուծոյն Աննկերկիմաց. և զանհրաժեշտ հրա-

մանն Տեառն՝ որ եհաստ 'ի վերայ նորա զվճիւ մահու, արտասու աւք բնկրկեալ յեսս նհանջեաց՝ յաւելեալ յաւուրս իւր՝ ամն հնգեամասն: Քոքք ինչ արգեաւք էր և Յովնայ բարեպաշտութիւնն, որ իբրև էած առ նա Վեղլիտս քահանայ զմատեանս աւրինացն թաքուցեալ 'ի տաճարին, պատառեաց զպատմութեանն. խնդրեաց 'ի բոլոր սրտէ զՏէր Աստուած Իսրայէլի: Աւ առաքեաց առ Ողղան մարգարէուհի աղաչել զՏէր. և այնքան վրէժինդիր եղև աւրինացն, մինչ զի զոսկերս ամբարշտելոցն հանեալ այրեաց 'ի վերայ զերզմանեացն իւրեանց: Պատուեաց զպաշտաւնեայն Աստուծոյ և զքահանայս, զի այսու աճեալ լինէր բարեպաշտութիւնն 'ի թագաւորս, որպէս և վասն Յովասու թագաւորի սէզ գիրն, թէ, "բարեպաշտեցաւ Յովաս, որչափ լուսաւորեաց զնա Յովնայ քահանայ, և յաղթող դուստ ամենայն ներհակաց իւրոց: Բազումն և յոլովս գացես 'ի թագաւորաց այսու սրայ՝ ծառացեալ՝ որպէս 'ի հնումն, այսպէս և 'ի նորումն՝ Առստանդինոս, (Աբգար), Թէոփոս, Տրդատ և այլք: Որովք յայտ է, զի՝ վայելուչ է ամենայն թագաւորի, ամբիժ հաւատով բեկոխլ յերկինջ Աստուծոյ և 'ի սէր. և թէպէտ ստանալ յաշխարհի պետրս, փառս և բազմութիւն զաւրաց, զի ըստ Սողոմոնի՝ յի բազում զաւրս փառք թագաւորի". սակայն յանուն և 'ի փառսն Աստուծոյ ապաստան լինել, յամենեցունց զակն 'ի բաց դարձուցանել, և զնա միայն ճանաչել:

Չ 'ի թէև այժմ ոչ է կոսապաշտութիւն յատուկ, այլ յոլովս և բազումն զոն պատուակաւ: Մի միայն զագահութիւն առցես, որ է երկրորդ կոսապաշտութիւն. այլ և զամենայն հմայս և զնախազխտութիւնս.

վասնորոյ հարկ է թագաւորի և ամենայն (առն) բարեպաշտի՝ յախաես յայսմանէ 'ի բաց կալ: Ասախ յաստեղագիտութենէ, և յայնպիսեացն հմայողաց, ոչ միայն ամբարշտութիւն զայնպիսեացն զեղերմունան համարել, այլ և անմտութիւն: Վանդի թէ ըստ նոցունց ասացելոցն ծնեալքն յաստեղս չար և բարի գոն, և 'ի նոցին հայեցից լինի յաշխարհի լուսն և վատթարն, և ամենայն ինչ 'ի հարկէ ըստ բազդի և ըստ ճակատագրին լինի, ապա ոչ զոյ անձնիչ խանութիւն, և անիրաւք են աւրէնք և պատուիրանք՝ որ Աստուծոյ եղեալ և 'ի դատաւորաց. զի զանկարելին հրաժարեցուցին. և ոչ է իրաւացի սրտիժ չարագործաց, և պատիւ բարեգործաց, ոչ աստ և ոչ 'ի հանդերձեալն: Աւ զի՞նչ պիտոյ էր այլ աւր և հաստեցումն: Աւ վասն էր մասութիւլ զաստուած, և կամ զի՞նչ խնդրել 'ի նմանէ, այլ նոցա տալ պաշտաւն, որք կարեն առնել ինչ:

Այլ ուղղոց սրտից արժան է ունայն համարել զայնպիսի աստութիւնս, և զիտել միայն զաստեղս ըստ հրամանի գրոյն, "լինել լուսատու երկրի, և 'ի նշան աւուրց, ամսոց և ժամանակաց, և ամաց": Աւ զաւելին քան զայս խոտել կարծիս: Ըստ որում ասաց Աստուած 'ի ձեռն Ովսէ մարգարէի, "ես եմ Աստուած որ հաստատեցի զերկինս և զաւրս, այս է, զաստեղս, և ոչ ասացի քեզ կրթալ զհետ նոցա": Աւ Ասայի հենդնէ, "ո՛ւր են աստեղագէտքն քո, յարիցեն և սպրեցուցեն զքեզ": Յեա որոյ և 'ի սոցունց ճանաչել արժան է զաւրութիւն աստեղանշմարից. զի ծնեալք յիւրաքանչիւր ատող որպէս նոքայն ստեն, և յայլ և այլ բախտ և ճակատագիր վիճակեալ, և 'ի միւում տան 'ի շարժէ ստուակեցան, կամ 'ի միոյ

պատումանէ երկրի ընկղմեցան, կամ 'ի մի նաւ ընկղմեցան. զոր զե՞նչ համարելէ, որ 'ի բազում բախտ ճակատադրեալ յայլ և այլ ասակզս, և 'ի մի վախճան առին զկատարումն. զինի սոցա զգուշութեանց արժան է ոչ ընդունել զքարընկեցս, զգարընկեցս, զբիճհայեացս, զալիւրաղիւթս, զգարեղիւթրս, զհաւահմայս, զլիւթահմայս, և որ զկտիճս և զթռիչս, և զբառաչիւն և զբաչիւն անասնոց խորեն, և զայլն և ս. և ոչ միայն յայսքանեաց, այլ և 'ի բարիոքն կարծեցելոց վեճակաց 'ի բաց լինել : Բայց միայն թէ աղաւթիւք խնդրել 'ի Տեսունէ վեճակաւ ընտրութեան Կատարիայ, և ըստ այնմ զոր եփուան կտաւի առ Կաւիթ. և զայսոսիկ ոչ փորձութեան աղագաւ, զի գրեալ է, "մի՛ փորձեցես զՏէր Եստուած քո". այլ միայն (վասն) յայտնութեան ճշմարտութեանն : Իսկ զայլ տեսական թողուլ իրիւ զմնասակարս և զմատուէս կռապաշտութեան, զի "հմայքն մեզք են" ասէ զիրն Եստուածային : Եւ ըստ ասացելոցս զարգարեալ թագաւոր դասնի ամենեցուն յաղթող. այլ և յամենայն իրս անուանի և փառաւոր. քանզի բարեպաշտութիւն և սէր առ Եստուած, ոչ զթագաւորս միայն, այլ ըզոսակիս անուանի գործէ. զի ո՛ւր երեւի բազմամբոխն Կսեղքսէս՝ առ ձկնորսն Յովհաննէս, և Կարեհ վշտասպեան, և Երտաշէս քաջ՝ առ սկարն (անկարն) Պաւղոս : Եւ զի մի՛ զառաքեալն 'ի նշանացն և 'ի պայծառագոյն փարույն անուանիս և հոշակաւորս կարծեցես լինել, տես զևս նուաստագոյնն 'ի բարեպաշտելոցն առ Եստուած անուանի եղեալ որպէս զիլինն պրուն (պրունիկ), որ էաւ ծ զՏէրն կողմ, զորմէ արձանադրեաց ընդ աւետարանին խաւսեալ անըսպառ զգործ նորա 'ի յիշատակ նորին : Կա

և խոնարհութիւն հոշակիւի և բարձրագոյն գործէ զթագաւոր, որպէս նորին ընդդիմակն յերկիր անկեալ և նուաստագոյն, որ և երեւի առ Մովսէս, և Փարաւոն, և առ Կաբուզոգոնոսոր, և Կանիէլ, և 'ի Կենեքերիմ, և յԱղեկիս և յայլ յորում, ըստ որում Տէրն հրամայէ, "որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի. և որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի". և առաքեալն Պետրոս, թէ՛ "խոնարհեցարուք ընդ հզաւրձեռամբն Եստուծոյ, զի զձեզ բարձրացուցէ 'ի ժամանի ('ի ժամանակի)". զի թէ՛ "որ հարարտանայ 'ի դատաստան ստանայի անկցի" որպէս զի՛ Պաւղոս. յայտ է թէ՛ որ բարձրն գոլով խոնարհեցի, կցորդ փառաց լինի այնմ՝ որ (ի) գերակայ բարձրութենէ փառացն թափեցաւ 'ի մեր նուաստութիւնըս, և անձառ խոնարհութեամբ զկերպարանս ծառայի զգեցաւ : Յորովք են խոնարհութեան քարոզք թագաւորաց :

ՂԱՍՏ ԴԱՏԱՍՏԱՆԻ : Ի վախճան եկեալ բանս՝ կամելով կատարումն առնել կանոնական խրատուցս, հանգերձեալ էաք մեծագոյն տուգանս կրել, զհարկաւորն և զբլուխն էր ամենայն բարութեանց լուել, որ է դատաստանի և իրաւանցն բան. զի թագաւոր որ խնդրէ 'ի հաստատութիւն կալ, զհետ երթիցէ արգար դատաստանի և ուղեղ իրաւանց, ըստ որում ասէ Մողոմն, թէ՛ "թագաւոր՝ որ արդարութեամբ կանգնէ զաշխարհ". և թէ՛ "թագաւոր որ արդարութեամբ դատի, աթոռ նորա 'ի վկայութիւն հաստատեցի". և արդ դատաստան լինի յերկայնագոյն քննութենէ, ճշգիր (ճշգրիտ) 'ի վերայ հասանել : Մի՛ հակիրճ և համառատ առնել զիրաւունս յաղագս ձանձրութեան, և կամ յաղագս հատու և սուր երեւելոյ : Կանգնել զայն ոչ փոյնէ մարդկան

առնել, որոց կարծողագատ և կասկածա-  
վճիռ է առեան դատաստանին, այլ մեծա-  
պէս քննութեամբ և աշխատասիրաբար հա-  
տու լինել: Տես զամենագէտն, որ զանդործ-  
արն տեսանէ, զի սակբ առ Աբրահամ, թէ  
"աղաղակ Սողոմոնացւոցն և Վոմորացւոցն  
իլ առաջի իմ. արդ իջեալ տեսից՝ թէ ըստ  
աղաղակին որ յիս հասանէ, վճարեսցեն.  
ասպա թէ ոչ՝ զի դիտացից": Աւ զի քէն  
որ բողոքէին առ Աստուած զչար գործսն  
Սողոմոն, եթէ ոչ հրեշտակքն՝ պահապանք  
նոցա, զի են կարգեալ յԱբրաքէն ամենայն  
ազգի և անձի հրեշտակ՝ որք յականեն ըզ-  
գործս մարդկան և հաննն առ Աստուած  
զչար և զչարի որպէս յայտ է ՚ի բազում  
գիրս: Աւ Տէրն իսկ ասէ, թէ "մի արհամար-  
հէք զմի ՚ի փոքրկանց աստի, զի հրեշտակք  
նոցա հանապ (հանապազ) տեսանեն զերեսս  
շաւր իմոյ՝ որ յիրկինս": Աւ առ Առնե-  
լիոս իւր հրեշտակն ասէր. "Առնելիէ, ա-  
ղաւթք քո և ողորմութիւնք յիշեցան առա-  
ջի Աստուծոյ" . . . : Այսպէս և Սողոմոնե-  
ցւոց հրեշտակքն բողոքէին զչար գործս  
նոցա. և Աստուած իբրու կերպարանէր  
յիրկրացս լինել. արդ բողոքիչքն՝ հրեշտակք,  
յորս ոչ գոյ նախանձ և ստութիւն. և որ  
լէրն Աստուած և ՚ի քննութիւն իջանէր,  
և իբրև մարդ տկար և սակաւաժամանա-  
կեայ, յառնէ ամբարշտէ լուեալ չարախաւ-  
սութիւն հաստատէ: Այլ ոչ զիտէ զմար-  
դիկ, զի ոչ խնայն ՚ի միտեանս. որ թէ զայլ  
ոք գտանէին զաւրեղագոյն, և ՚ի վերայ Աս-  
տուծոյ յանդգնէին, ըստ որում գոցես ըզ-  
հրեայնն առ Վրիստոսիւ կատարեալ: Այս  
անորոյ ոչ է պարտ թագաւորի ՚ի լեկն միայն  
հաւատալ չարախաւսութեան, այլ յոյժ  
քննել, որպէս և Աստուած զինքն աւրինակ  
եզ գատաւորացն՝ քննելովն զՍողոմոնացիսն:

Չի թէ թագաւոր սիրէ զառ ունին ճառս,  
և զարս մասնիչս, յայն աճեն մարդիկ և  
զնոյն միշտ առնեն որպէս ասէ Սողոմոն.  
"Թագաւոր որ հաւանի բանից անաւրէնու-  
թեան, ամենեքեան որ զնովաւ են, անաւ-  
րէնք են": Այլ ՚ի լեկն զհակառակութիւն  
միտեանց, երկայնմտութեամբ և հեղութեամբ  
լուիցէ, և բազմաւքն քննեսցէ և վկայիւքն  
ստուգեսցէ, այլ և աղաւթիւք խնդրեսցէ ՚ի  
Տեսնէ զյայտնութիւն իրին: Աւ յորժամ  
ըստ կարողութեան ՚ի վերայ հասցէ իրաւանցն  
առանց խղճմտութեան և թերութեան, յայն-  
ժամ և ոչ ըստ միոյ իրաց մի՛ փոխեսցէ և  
վաճառեսցէ զճշմարտութիւնն: Այլ և ան-  
փորձ գոցի արծաթոյ, որում ամենայն ոք  
լսէ: Վրանգի "յաղթութիւն և զպատիւ  
ստանայ՝ որ զկաշառսն տայ. բայց զոգի ա-  
ռողին սարսնէ" ասէ Սողոմոն: այլ թագաւոր՝  
որ ախորժէ անսասանելի մնալ յան (զուցէ՛  
յաւխտեան), "կաշառ ՚ի վերայ իրաւանց մի  
առցէ"՝ հաւանեալ դաւթայ: Չի "հուրայ-  
րեսցէ զտունս կաշառառուաց" ասէ Յոր:  
Այլ և մի աշառեսցի ՚ի մեծն, զի "ցրուէ  
Աստուած զոսկիրս մարդահաճոյից" ասէ զիրն  
և "որ մարդկան հաճոյ լինի, Վրիստոսի  
ժառայ ոչ է" ասէ զիրն Պաւղոսի: Աւ մի  
վասն աղկաղկութեան ՚ի յիրաւունսն զթաս-  
ցի ՚ի անանին: Չի միապէս վճիռ ևս որ  
ասացն. "մի ակն առնուր հզաւրին, և մի  
ողորմիր աղքատին ՚ի դատաստան":

Վարձեալ իրաւացի թագաւորի յիրա-  
ունս՝ որք յինքն հասանի, ոչ միշտ խնդրել  
զհնազանդեալսն, այլ և երբեմն ողորմութիւն  
խառնել յիրաւունսն. զի "ողորմութիւն և  
զճշմարտութիւն պահապան թագաւորի" աս-  
է Սողոմոն. և յողորմութիւն և յիրաւունս  
աւրհնարանի Աստուած: Բայց առնել զո-  
ղորմութիւն արժան է, ըստ տեղոյ և ըստ

պատշաճի. զի յիւրոց իրաւանց որպէս վերադոյնն ցուցարք, որքան և թողուցու, իւրոցն գտանէ յանցանաց թողութիւն յարգարարաստ ասանն Աստուծոյ: Ապա թէ այր ընդ եղբաւր դատի, անդ ոչ է իրաւացի առնել ողորմութիւն. զի այսու ոտիս նորա ըննի անիրաւութիւն. բայց թէ միջնորդ հաշտութեան եղեալ համոզեցէ զնոսա 'ի խաղաղութիւն առանց շահելոյ ինչ 'ի նոցանէ: Աւ զի անկար է թագաւորաց զամենայն իրս ինքեամբ վճարել, կացուցեն դատաւորս արգարակորովս՝ անադահ բարուս ունել, ալք որ ատիցեն զհարաւութիւն. և մի՛ զայն միայն բաւական համարեցին, 'ի նոսա ձրգիլ զեսիղճ՝ դատաստանին. և ապա կաշառ ի վերայ իրաւանց առնլով և մեծապէս պահանջմամբն 'ի դատաւորաց զինչան՝ հարկիլ զնոսա յանիրաւութիւն: Այլ կամ 'ի դատաւորսն մի՛ ամենև ին զել և զմուտ ընչիցն

յանձնել, այլ այլոց զնոյնն հաւատալ, և նոցա զբան իրաւանց և զգատաստանին միայն հոգալ, և կամ կշռել զծախս իւրեանց ի վերայ մտիցն իւրեանց, և թե աւելի հարկ հասցէ ինքեան, զիտութեամբ ամենեցուն հաւատարարս հանել յաշխարհէն, և բզնոցն 'ի պէտս հասարակաց հանել, և ոչ իւրոյ անձինս:

ՎԱՍՆ ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ: Չլուխ բանիս անհրաժեշտ ունել զբան խոստման և զգրաւորական հրաման, սիրել զստուգութիւն և ճշմարտա ընել յամենայնի: Օ՛ր հրաման է Աստուծոյ ընել հաւատացելոցն ի նա, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. մանաւանդ թագաւորի՝ որոյ մի ինչ ստութիւն ասացի 'ի լեզուէ նորա. զի "մարգարէութիւն 'ի շքութունս թագաւորի" ասէ Սողոմոն: Աւ այսքան բաւականացի յաղագս թագաւորի:

(Վերջ ի յեսպայ ամսագիրն):

## Ի ՏՕՆԻ

### ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

#### Ի ԼԵՐԻՆՆ ԹԱՓՈՐ

Ա՛հ դու 'ի փող 'ի տարփող՝ լեռնդ թափո՛ր, խրախ 'ի դէմ,  
Ի լոյս շնորհաց, փթթեալ ծաղկանց՝ 'ի քո 'ի սուրբ 'ի հովտէն.  
Օ՛տաղկասափեա կատարք բլրացդ՝ 'ի սուրբ տօնիս ողջունի,  
Պատկ լուսոյ, կարմ 'ի զաղաթ, քոյին փնջեալ շողշողի:

Ուրախացի՛ր խորան լուսոյ, դատեր Մօրդ Արմիւնի,  
Յնճան 'ի քեզ այսօր որդիք՝ այրիացեալ Մասիսի.  
Օ՛ւրգս կազմեալ ազգի ազգի՝ եղանակաց հրճուանաց,  
Ի սէր փառաց հանդիսիդ՝ զերազանցեալ 'ի մտաց: